

## ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ

Համալսարանում գործում է անվճար և մասնակի վճարովի համակարգ, որը հիմնվում է ուսումնական առաջադիմության վրա: Մոցիալական խնդիրներ ունեցող ուսանողներին տրվում են կրթաթոշակներ՝ համաձայն իրենց դիմումի: Տարեկան ուսման վարձը բակալավրիատում 400.000 դրամ է, իսկ մագիստրատուրայում՝ 200.000 դրամ /համալսարանի շրջանավարտների/ և 300.000 /այլ բուհերի շրջանավարտների համար/:



Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ  
ԵՐՊԼՀ

# ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

2006/2007 ուսումնական տարի



Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐՊԼՀ

Հեռախոս՝ 53-31-31  
Էլ-փոստ՝ [foreign@brusov.am](mailto:foreign@brusov.am)

# Գիտելիքներս՝ ինձ, նվաճումներս՝ հայրենիքիս

Օտար լեզուների ֆակուլտետը հիմնվել է 1935թ., վերակազմավորվել՝ 2004 թվականին՝ հանդիսանալով օտար լեզուների և ռումանագերմանական լեզուների ֆակուլտետների իրավահաջորդը:

Ֆակուլտետը համալսարանի օտար լեզուների ուսուցման կենտրոնն է, այս ոլորտում համալսարանի կուտակած 40-ամյա փորձի կրողը: Մասնաձևերով հանրապետությունում օտար լեզուների մասնագետի պատրաստման առաջատարներից մեկի պատասխանատու դերը՝ ֆակուլտետն իր գործունեության հիմքը համարում է ռումանական և գերմանական լեզուների շրջանակում լեզվաբանական լայն գիտելիքներով մասնագետների պատրաստումը:

Ֆակուլտետն իր 1700 ուսանողներով ամենամեծն է համալսարանում: Սակայն ֆակուլտետի այցետումն իր քանակը չէ, այլ որակը: Կրթական գործընթացի բարձր որակը երաշխավորվում է և յուրաքանչյուր դիմորդ, առավելագույնս նվիրվելով իր ընտրած մասնագիտությանը, ուսումնառության ավարտին դառնում է լեզվաբանության ոլորտի բանիմաց մասնագետ՝ երեք օտար լեզուների ազատ տիրապետմամբ:



Ֆակուլտետում իրենց գործունեությունն են իրականացնում **լեզվաբանության, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի, 2-րդ օտար լեզվի, մանկավարժության** և այլ ամբիոններ: 2003 թվականից

իրականացվում է նաև **իտալերեն** լեզվի մասնագետների պատրաստումը՝ որպես առաջին մասնագիտություն, իսկ **հունարենը, կորեերենն ու պարսկերենն** իրենց ուրույն տեղն են գրավել ֆակուլտետի մասնագիտացումների ցանկում:

Ֆակուլտետում մեծ ուշադրություն է դարձվում ուսումնական պրոցեսի կատարելագործմանը, ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների միասնության ապահովմանը: Կից գործում են ֆակուլտետային **ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը**, պարբերաբար կազմակերպվում են ներբուհական, միջբուհական և միջազգային տարաբնույթ գիտաժողովներ և քննարկումներ, հրատարակվում է **«ՕԼՖ օրագիր»** ամենամսյա ուսանողական ֆակուլտետային տեղեկագիրը:

Կրթությունն ինչպես համալսարանում, այնպես էլ ֆակուլտետում իրականացվում է դասավանդման ժամանակակից եվրոպական նորագույն մեթոդներին համապատասխան:

Վերջին 3 ուսումնական տարիների արդյունքում ֆակուլտետը լավագույնն է ճանաչվել ներբուհական **«Լավագույն ֆակուլտետ»** ստուգատես մրցույթում:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ֆակուլտետը մասնագետներ է պատրաստում հետևյալ մասնագիտությունների գծով՝

1. **Օտար լեզու (երկու լեզու) անգլերեն և ֆրանսերեն, անգլերեն և գերմաներեն, անգլերեն և իսպաներեն, անգլերեն և իտալերեն, անգլերեն և հունարեն, անգլերեն և պարսկերեն, ֆրանսերեն և անգլերեն, գերմաներեն և անգլերեն**
2. **Մանկավարժության բակալավրիատ օտար լեզուներ /անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և 2-րդ օտար լեզուներ/**
3. **Լեզվաբանության բակալավրիատ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և 2 օտար լեզու**
4. **Բանասիրության բակալավրիատ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն**



Ֆակուլտետում որպես երրորդ օտար լեզու դասավանդվում են կորեերենն ու չինարենը:

## ՕԼՖ-ն ԱՅՍՕՐ

ՕԼՖ-ն փոքրիկ աշխարհ է իր լեզուների բազմազանությամբ, մշակույթների խաչմերուկ իր գործունեությամբ: Ֆակուլտետի միջանցքներում հայերենին զուգընթաց հնչում են անգլերենն ու հունարենը, ֆրանսերենն ու իտալերենը, գերմաներենն ու իսպաներենը, պարսկերենը, չինարենն ու կորեերենը:

Լեզվական ակումբներն ու կարինետները, պլեհավաքներից հեռարձակվող համապատասխան լեզուներով հաղորդումները, օտարալեզու բեմադրություններն ու երեկույթները ֆակուլտետի ուսանողների առօրյա կյանքի անքակտելի մասն են, գործընթացն ու առօրյան:

Ֆակուլտետի ուսանողների գործընկերներն են ոչ միայն բազմավաստակ դասախոսները, այլ նաև համապատասխան երկրների դեսպանատների աշխատակիցները, նրանց օգնությամբ ֆակուլտետում դասավանդվող օտարերկրացի լեզվակիր դասախոսները:

Օրեցօր ընդարձակվում են ֆակուլտետի միջազգային կապերը: Բուալիայի Վերոնայի քաղաքապետարանի ու համալսարանի, Պերուջայի համալսարանի, հունական, պարսկական համալսարանների հետ կապը, նրանց հետ իրականացվող ուսանողական փոխանակումներն ու ամառային դասընթացները նոր հեռանկարներ են բացում կրթական բարեփոխումների շրջանակներում ուսանողների շարժունակության համար:

Ֆակուլտետի լեզվական թատերական խմբակները ներկայացումներով հանդես են գալիս ոչ միայն բուհում, այլ նաև ցանկալի հյուրեր են հանրակրթական դպրոցներում և “Նարեկ” մշակութային կենտրոնում:

